ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/128

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Գ. Օհանյանի, Զ. Մանասարյանի, Ն. Զաքարյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, գոտիների և սրբիչների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7352-2020 գրությամբ «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.05.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1548-2020 գրության հիման վրա, 19.05.2020թ.-ին «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 19.05.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/128 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

27.05.2020թ.-ին և 18.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.06.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 14.05.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1548-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/27» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 20.04.2020թ., և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի և 2-րդ մասի 2.5 կետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ

բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.»: Մասնակիցը հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով որպես հայտի ապահովում ներկայացրել է բանկային երաշխիքի արտատպված (սկանավորված) տարբերակը, սակայն մինչև 21.04.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չեն ներկայացրել իրենց կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովումների բնօրինակները, ուստի 08.05.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է Մասնակիցի հայտը:

Կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

3. <u>«Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7352-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 22.05.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ ֆինանսների նախարարության 2020թ.մայիսի 19-ի թիվ 26/26-1/7352-2020 գրության (այսուհետ՝ նաև Գրություն) համաձայն «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներա-ռելու նպատակով ընթացակարգը:

Ընկերությունը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը՝ Ձեզ ենք ուղարկում մեր կարծիքն ու հիմնավորումները

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառվելու հարցի վերաբերյալ:

Փաստական հանգամանքներ.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սույն թվականի ապրիլի 8-ին հայտարարվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/27» ծածկարգով ընթացակարգի 2-րդ չափաբաժնին մասնակցելու հրավեր/այսուհետ՝ Հրավեր/:

2. Ընկերությունը որոշում է կայացրել մասնակցելու Հրավերին:

3. Ընկերության կողմից ներկայացված Հայտն էլեկտրոնային ստորագրվել և ներբեռնվել է սույն թվականի ապրիլի 18-ին armeps էլեկտրոնային գնումների համակարգ: Էլեկտրոնային համակարգ ի թիվս այլնի նույն օրը ներբեռնվել է նաև բանկային երաշխիքի վերաբերյալ տրված փաստաթուղթը:

4. Մինչև ս.թ. ապրիլի 21-ը ներառյալ ըստ Հրավերով սահմանված պայմանների, ընկերությունը պետք է ներկայացներ բանկային երաշխիքի վերաբերյալ բնօրինակ փաստաթուղթ, որի ներկայացնելը սակայն Ընկերության համար եղել է անհնարին:

5. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/7» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 1 արձանագրությամբ ինչպես նաև Գրությամբ տեղեկացել ենք, որ Ընկերության կողմից հայտի ապահովում բանկային երաշխիքի բնօրինակը չներկայացվելու պատճառով գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով 04.05.2017թ. ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 42-րդ կետի պահանջներով մերժել է Ընկերության հայտը, և նախաձեռնել Ընկերությանը՝ Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթաց:

Ընկերությունը գտնում է, որ վերը նշված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթացն Ընկերության նկատմամբ չի կարող իրավաչափ լինել հետևյալ պատճառաբանությամբ.

Առարկության հիմքերն ու իրավական հիմնավորումները.

Համաձայն Որոշման 41 և 42-րդ կետերի պահանջների՝

«41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը»:

Ստացվում է, որ Որոշման 42-րդ կետն անհամապատասխանությունը շտկելու համար նախատեսված սահմանված ժամկետը պարզաբանելու նպատակով հղում է պարունակում նույն որոշման 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությանը որի բովանդակությունն է՝ «Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ /…/դ. գնային առաջարկ»:

Ստացվում է, որ 32-րդ կետի վերոնշյալ պարբերությամբ չի պարզաբանվում սահմանված ժամկետ, ուստի կարգի 42-րդ կետով սահմանված ժամկետների խախտում չի կարող կիրառվել 32-րդ կետի դ/ ենթակետի հղմամբ այն պարզ պատճառով, որ նշված կետում որևէ սահմանված ժամկետ առկա չէ:

Նշենք, որ համաձայն «Նորմատիվ Իրավական Ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի՝.

«1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից /…/»:

Վերոնշյալ Որոշման 42,32-րդ կետերի վերլուծությունից պարզ է դառնում, որ հայտում անհամապատասխանության առկայության դեպքում մասնակիցը ծանուցվում է

այդ մասին և վերջինիս հնարավորություն է ընձեռնվում սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը: Նշված ժամկետում շտկումն անելու դեպքում հայտը համարվում է բավարար:

Քննելով այս դեպքը պետք է արձանագրել, որ չնայած էլեկտրոնային եղանակով ծանցուվելու համար բավարար տեղեկություններ տրամադրելուն՝ Ընկերությունը չի ծանուցվել որևէ անհամապատասխանության մասին: Բացի ծանուցման էլեկտրոնային եղանակներից Ընկերության կողմից տրամադրվել է նաև հեռախոսահամար, որով նույնպես ծանուցում չի իրականացվել:

Այսպիսով՝ այս մասով Ընկերության առարկությունը ամփոփելով կստացվի, որ.

• Գրությամբ և Արձանագրությամբ մասնակցին մերժելու համար հիմք հանդիսացած Որոշմամբ՝ պարզ է դառնում, որ, նախևառաջ, մասնակիցը պետք է ծանուցվեր Հայտում առկա անհամապատասխանության մասին: Ինչը տեղի չի ունեցել ո՛չ էլեկտրոնային և ո՛չ էլ որևէ այլ եղանակով:

• Երկրորդ՝ Որոշման 42-րդ կետը հղում է պարունակում հայտի ապահովման բնօրինակը ներկայացնելու ժամկետին, որի տառացի մեկնաբանման պարագայում մասնակցի համար ամենևին պարզ չի դառնում, թե որն է այդ սահմանված ժամկետը և որ ժամկետում չներկայացնելու դեպքում պետք է մերժել մասնակցին:

Մյուս կողմից, հարկ ենք համարում նշել Գնումների գործընթացի այս կամ այն մասնակիցը Ցուցակում հայտնվում է միայն այն դեպքում, երբ առկա են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված և մասնակցի կողմից դրսևորված վարքագծերը, մասնավորապես՝ համաձայն Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի՝ «1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք /…/ 6) /…/ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից /…/ »:

Սույն դեպքում կարելի է անմիջապես բացառել վերոնշյալ բ. կամ գ. ենթակետերի հիմքերը, ուստի հարկ ենք համարում անդրադառնալ միայն ա./ կետի բովանդակությանը և դրա կիրառելիությանը «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին նշված Յուցակում ներառելու հարցում:

Օրենքի 6-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ մասնակիցը ա ենթակետի համաձայն կարող է ընդգրկվել Յուցակում եթե խախտել է ստորև նշված պայմաններց թեկուզև մեկը.

1. պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի լուծման,

կամ

2. գնումների գործընթացում իր կողմից ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը

Վերը նշված կետերի վերլուծությունից բխում է, որ առաջին դեպքում Ընկերությունը պետք է հանդիսանա կնքված պայմանագրի կողմ, իսկ երկրորդ դեպքում՝ պետք է ստանձնի որոշակի պարտավորություն:

Առաջին դեպքը կիրառելի չէ, քանի դեռ Ընկերությունը չի հանդիսանում որևէ պայմանագրի կողմ, իսկ երկրորդ դեպքում անհրաժեշտ է վերլուծության ենթարկել «պարտավորություն ստրանձնելու» եզրույթը: Այս հարցով ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի հունիսի 14-ի որոշմամբ անդրադարձել է «պարտավորություն» հասկացությանը՝ նշելով, որ. «ՀՀ Սահմանադրության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ կոնկրետ դեպքում, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, «պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն: «Պարտավորություն» հասկացությունն իր հերթին ենթադրում է իրավունքի սուբյեկտի կողմից իրավունքի ուժով կամ իր ազատ կամահայտնությամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնված համապատասխան վարքագիծ»:

Ստացվում է, որ պարտավորություն ստանձնելու համար Սահմանադրական դատարանը հստակ նշում է, որ անհրաժեշտ է քաղհրավական սուբյեկտի կողմից ակտիվ

վարքագիծ և դրա դրսևորում: Տվյալ դեպքում Ընկերությունը գնումների գործընթացում չի կատարել որևէ հայտարարություն, չի ունեցել նման հայտարարություն կատարելու պարտականություն, որով կսահմանվեր բանկային երաշխիքի բնօրինակի տրամադրման ժամկետ, իսկ ինչպես երևում է Օրենքի 6-րդ հոդվածի ա/ ենթակետի բովանդակությունից, որպեսզի այն կիրառելի լինի տվյալ դեպքի համար, Ընկերությունը պետք է ակտիվ վարքագիծ դրսևորի՝ որևէ պարտավորություն ստանձնելու ուղղությամբ, ինչը սակայն տեղի չի ունեցել, ուստի և Ընկերությունը չի կարող ներառվել Ցուցակում՝ Օրենքի 6-րդ հոդվածը տվյալ դեպքում կիրառելի չլինելու հիմնավորմամբ:

Այնուամենայնիվ, ձևի նկատմամբ բովանդակային մեկնաբանության գերակայության սկզբունքով առաջնորդվելու դեպքում հարկ ենք համարում նշել, որ բովանդակային առումով «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից պահպանվել է երաշխիքի ապահովման վերաբերյալ պահանջը, իսկ ձևական կողմի պահպանումը. այն է սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է եղել ՀՀ-ում արտակարգ դրությամբ, և բնավ նպատակ չենք ունեցել հրավերով սահմանված պահանջի թերակատարման կամ չկատարմանը:

Հարկ ենք համարում նշել, որ չնայած սահմանված ժամկետի վերաբերյալ անորոշության: Սույն գնման ընթացակարգով մեկ այլ մասնակից ևս չէր ներկայացրել հայտի ապահովում բանկային երաշխիքը, սակայն գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով և մասնակցին առաջարկվել էր շտկել անհամապատասխանությունը:

Մեջբերում Արձանագրությունից՝

«2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ Օբորոն Տեքստիլ ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացրած հայտում բացակայում էր հայտի ապահովում բանկային երաշխիքը, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 06.05.2020թ. նիստը կասեցվեց մեկ աշխատանքային օրով և առաջարկվեց մասնակցին շտկելու անհամապատասխանությունը:»

Այսինքն՝ միևնույն ընթացակարգում, նույն փաստաթղթի բացակայության դեպքում գնահատող հանձնաժողովը ցուցաբերել է տարբերակված մոտեցում:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում նաև անդրադառնալ տեղի ունեցածին մասնակցի ունեցած միտման տեսանկյունից: «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին սույն թվականի ապրիլի 17-ին Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից տրամադրվել է թիվ

O.AB.100.12.CIB.PIED.0.4670.20 երաշխիքը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սույն թվականի ապրիլի 8-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/27» ծածկարգով ընթացակարգի 2-րդ չափաբաժնին մասնակցելու համար, որի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը ներբեռնվել է «armeps» համակարգ և առկա է Ձեր կողմից ներկայացված գրության առդիր ֆայլերում: Մինչդեռ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. մարտի 16-ի 298-Ն որոշման 20-րդ դրույթը, ինչպես նաև Պարեկի սույն թվականի մարտի 31-ի N 27 որոշումը՝ հայտնում ենք, որ ՀՀ ողջ տարածքում գործել են ազատ տեղաշարժի սահմանափակումներ, իսկ մի շարք ոլորտի արտադրությունների կազմակերպումը, այդ թվում տեքստիլի արտադրությունը եղել է ժամանակավորապես դադարեցված: Հայտնում ենք, որ աշխատանքները «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ում վերսկսվել են սույն թվականի մայիսի 4-ից, որի պատճառով տվյալ ժամկետում հնարավոր չի եղել ներկայացնել բնօրինակը ՀՀ ՊՆ նշված հասցեով: Հայտնում ենք, որ պատրաստակամ ենք ներկայացնել ընթացակարգի քննության նպատակով հրավիրված առաջին նիստին եղած բանկային ապահովման բնօրինակը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ ինչպես գնային առաջարկի չափով որակի ապահովման ներկայացումը, այնպես էլ հայտի ապահովման բնօրինակի ներկայացնելը պետք է հաջորդեին հրավերի բացմանը, մինչդեռ «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն, համաձայն հրավերի Հավելված 1-ում սահմանված ձևի՝ ներկայացրած դիմում-հայտարարության ներկայացմամբ ստանձնել է միայն որակի ապահովման երաշխիքի տրամադրումը, այն էլ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում միայն: Հետևաբար՝ կարծում ենք, որ չնայած նրան, որ հրավերով նախատեսված է եղել հայտի ապահովման բնօրինակի ներկայացումը, ինչի տրամադրումից «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն երբևէ չի հրաժարվել, սակայն արտակարգ դրության հանգամանքով պայմանավորված սահմանված ժամկետում չի ներկայացրել, չի խախտել իր կողմից ստանձնված որևէ պարտավորություն, ուստի բացակայում են «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնա¬կիցների ցուցակում ներառելու համար:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, խնդրում ենք «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին չներառել նշված Ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գոտիների և սրբիչների ձեռքբերման նպատակով 10.04.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ն:

«Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/27» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020թ.-ին տրամադրված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.4670.20 բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ նաև՝ Երաշխիք):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի գնահատող հանձնաժողովը 08.05.2020թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7352-2020 գրությամբ «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված

(սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գոտիների և սրբիչների ձեռքբերման նպատակով 10.04.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ն՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020թ.-ին տրամադրված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.4670.20 բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

«Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը 08.05.2020թ.-ին որոշել է «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից, քանի որ Երաշխիքի բնօրինակ տարբերակը Կարգով սահմանված ժամկետում չներկայացնելու պարագայում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր վերջինիս՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնտեսական գործունեության մի շարք տեսակների նկատմամբ կիրառվել են սահմանափակումներ, այդ թվում նաև՝ տեքստիլի արտադրությունը եղել է ժամանակավորապես դադարեցված, և քանի որ «Էյ Բի Սի

Տեքստիլ» ՍՊԸ-ն իր աշխատանքները վերսկսել է ս.թ. մայիսի 4-ից, ուստի տվյալ ժամկետում հնարավոր չի եղել ներկայացնել երաշխիքի բնօրինակը Պատվիրատուին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից 21.04.2020թ.-ին բանկային երաշխիքի բնօրինակ տարբերակը գնահատող հանձնաժողովին հանձնելն եղել է անհնարին՝ պայմանավորված ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի մայիսի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7352-2020 գրությամբ «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/128 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**